

ԽԱՋԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

(Խ. Արովյանի ծննդյան 175-ամյակի առիթով)

ՀԱՍՆ ԴԱՍԱԿԵՄԻԿՈՍ ԷՊ. Մ. ԶՐԲԱՇՅԱՆ

1

Հայ նոր գրականության պատմության մեջ հաշտուր Արովյանին և նրա սկզբնաղբորած ստեղծագործական ավանդույթներին կանխորոշված էր եղանակաբանական, անփոխարինելի դեր։ Ժամանակի թելադրանքով և վիթխարի սուղանյութի շնորհիվ Արովյանն իր ստեղծագործությամբ դարձավ Հայ մշակույթի և հատկապես գրականության զարգացման որակապես նոր մեծ փուլի հիմնադիրը, նրա բոլոր հետագա որոնումների և նվաճումների ամուր նախահիմքն ու անսուղառ աղբյուրը։ Արովյանի մասին մենք կարող ենք կրկնել այն, ինչ Մաբսիմ Գորկին ասել է Ա. Ս. Պուշկինի վերաբերյալ. նա մեր գրականության «բոլոր սկիզբների սկիզբն է»։ Համանման մի միտք Արովյանի մասին հատնել է Ասլանիկ Իսահակյանը 1940 թ. գրած մի հոդվածում. «Մեր գրական ամեն անասկների սկիզբն է նա, դուրսագնական է և լիրիկական, բոցավառ դիդակտիկա, ապոստոլիկ քարոզներ։ Սատիրա, հումոր, ֆոկլորային անբավ նյութ՝ խառնված միմյանց հետ։ Հանճարեղ հանգույց ու մանտիզմի, ռեալիզմի, նատուրալիզմի»¹։

Սակայն այս հանգամանքը ոչ թե հեշտացնում, այլ, ինչքան էլ սա դարձանալի թվա առաջին հայացքից, դժվարացնում է «Արովյանի ավանդույթ» հասկացության հստակ բնութագրումը, նրա բովանդակության և սահմանների որոշման գործը։ Բանն այն է, որ այդ ավանդույթը, առանց որի անհնար է պատկերացնել XIX—XX դդ. հայ գրականության հետագա ողջ զարգացումը, մի որոշ իմաստով համընկնում և նույնանում է ազգային գրական-գեղարվեստական առաջադիմության հիմնական միտումների և օրինաչափությունների հետ։ Այդ պատճառով էլ հաճախ շատ դժվար է որոշակիորեն ասել, թե տվյալ գրողը հատկապես ո՞ր դեպքում է ուղղակի շարունակել Արովյանի ստեղծագործական պատվիրանները։ Չէ՞ որ, եթե խնդրին մոտենանք գրական-պատմական զարգացման լայն բնութագրով, Արովյանին հաջորդած հայ բոլոր նշանավոր գրողները կարող են, մեծ կամ փոքր չափով, համարվել նրա ավանդույթների ժառանգորդներ և շարունակողներ։ Ահա թե ինչու, խոսելով Արովյանի և հետագա շրջանի հայ գրողների ստեղծագործական փոխհարաբերության մասին, անհրաժեշտ է հարցը դիտել, այսպես ասած, զանազան մակարդակներով. տարբերակել, մի կողմից, գրական զարգացման օրինաչափություններից բխող կապերն ու բնահանրությունները և, մյուս կողմից, ստեղծագործական անմիջական առնչությունները։

Բոլոր նշված առումներով էլ բացառիկ հարուստ ու նշանակալից նյութ է պարունակում Հովհաննես Թումանյանի գրական ժառանգությունը։ Կարելի է ասել, որ այստեղ մենք տեսնում ենք հայ նոր գրականության մեծ հիմնադիր

¹ Ա. Ս. Իսահակյան. Նրկերի ժողովածու վեց հատորով. հ. 5, 1977, էջ 178։

հետ կապերի բոլոր հնարավոր ձևերը. այսպես կոչված կոնտակտային ուղղակի առնչություններ (զորական ուսումնառություն և ազդեցություն, հողավածներ և ասույթներ Աբովյանի մասին), ծագումնաբանական կապեր (Աբովյանի ստեղծագործության ուղղակի ներշնչմամբ գրված, նրա մոտիվները նորովի լուսաբանող երկեր), ինչպես նաև տիպաբանական ընդհանրություններ, որոնք բխում են երկու գրողների գեղարվեստական մտածողության և նրանց միջև կանգնած խնդիրների որոշակի նմանությունից: Ավելորդ է ասել, որ ստեղծագործական առնչության այս ձևերը մեծ մասամբ հանդես են գալիս ոչ թե գրտված և առանձնացված տեսքով, այլ իրար հետ միախառնված: Եթե ասվածին ավելացնենք այն հանրահայտ փաստը, որ Աբովյանն ու Թումանյանը հայ նոր գրականության այն բացառիկ մեծություններն են, որոնց կողքին հավասարի իրավունքով թերևս չի կարող կանգնել ուրիշ ոչ ոք, ապա պարզ կլինի, թե ինչքան կարևոր է նրանց ստեղծագործական առնչությունների գիտական ուսումնասիրությունը: Եվ, անշուշտ, մեծ գրականագիտության ցավալի բացթողումների թվին պետք է դասել այն փաստը, որ այդ թեման մինչև արժ հատուկ քննության չի արժանացել, եթե չհաշվենք տարբեր առիթներով արված առանձին գիտողությունները, ինչպես նաև բանասիրական փաստերի հավաքումն ու նկարագրությունը:

2

Խաչատուր Աբովյանը շատ վաղ մտավ Թումանյանի ըմբռնումների, ընթերցանության, հետո նաև ստեղծագործական հետաքրքրությունների ոլորտը: Հավանաբար՝ դեռ հայրենի գյուղում անցկացրած վաղ մանկական տարիներին, նախքան Զալալօղլու և Թիֆլիսի դպրոցներում սովորելը: Ապագա բանաստեղծի հայրական տանը եղել է «Վերքի» 1858 թ. թանկարժեք հրատարակությունը: Այդ գրքի նկատմամբ հարատևող համագգային հետաքրքրությունը՝ Գսեղում և, մանավանդ, Ճեր-Թադևոսի տանը, անշուշտ, պիտի կրկնապատկվեր վեպում՝ Լոռու քաջերի, հատկապես դսեղցի Մեհրաբ և Հովակիմ Թումանյանների՝ բանաստեղծի գերդաստանի փառաբանված նախորդների, դուրացական գործերի մասին եղած ոգեշունչ էջերի շնորհիվ: Այդ էջերը, որ Աբովյանը դրել էր ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Լոռիում լսած ավանդական պատմությունների հիման վրա, չէին կարող չոգևորել և հպարտությամբ տոգորել ապագա բանաստեղծին, որը գեռ վաղ մանկական տարիներից համակված էր մի բացառիկ սիրով ու հետաքրքրությամբ դեպի իր հեռավոր ու մոտիկ նախնիների հերոսական գործերը: Այդ հետաքրքրությունը, որի մասին շատ վկայություններ կան և՛ նրա գրական ժառանգության մեջ, և՛ ժամանակակիցների (հատկապես Ավ. Իսահակյանի և Լեոյի) հուշերում, տարածվում էր միջին դարերում Տարոնից Լոռի տեղափոխված Մամիկոնյան տոհմի շառավիղներից մինչև ոչ հեռավոր անցյալում լեռնականների դեմ մղած հերոսական կռիվները: մասնակիցները և զգալի շահով սնվում էր Աբովյանի վեպից: Այսպես, դեպի «Վերք Հայաստանին» և ընդհանրապես դեպի Աբովյանի աշխարհը Թումանյանի ճանապարհն սկսվում էր անձնական կենսագրական փաստերից և տպավորություններից:

«Վերք Հայաստանին» ուղեկցեց Թումանյանին նաև կյանքի բոլոր հա-

2 Այս տոմարով հատկապես պետք է նշել Ա. Ինձիկյանի «Շովհաննես Թումանյան. կյանքի և ստեղծագործության պատմություն (1869—1899)» մենագրությունը (1969 թ.) և Ա. Ասատրյանի «Ժանոթագրություններ» կցված Թումանյանի «Երևանի կոլիբ և ի. Աբովյանի «Վերք Հայաստանին» իրրե պատմություն» ուսումնասիրությունը (Երկերի ժողովածու. հ. VI, 1959):

3 Տե՛ս ի. Աբովյան. Վերք Հայաստանի, Ողբ հայրենասիրի, պատմական վեպ: Քննադատական և ծանոթագրություններ Պ. Հ. Հակոբյանը. Երևան, 1981, էջ 164—167: Բոլոր քաղվածքները Աբովյանի վեպից բերվում են ըստ այս հրատարակության, տեքստում նշվով համապատասխան էջը:

ջորդ փուլերում: Այդ մասին մի շարք վկայություններ են պահպանվել ժամանակակիցների հուշերում: Այսպես, Թումանյանի պատանի տարիների ամենամտերիմ ընկերներից մեկը՝ Անուշավան Աբովյանը, շատ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում, որը վերաբերում է Թումանյանի Թիֆլիս ժամանելու (1883 թ.) առաջին շրջանին. «Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» երկուսս էլ թևակտ վազուց կաողացել էինք, բայց ցանկանում էինք նորից կարդալ, ու շէր էարվում: Հովհաննեսի հայրն ուներ, նամակ գրեց, ուղարկեցին. նորից կարդացինք. սրտներս թունդ ելավ. ուղում էինք մենք էլ մի-մի Աբովյան ու Աղասի պոետալ»⁴: Ուշագրավ է նաև Ան. Աբովյանի պատմած մի ուրիշ փաստ, որն այսօր ծիծաղաշարժ թվացող իր բովանդակությամբ հանդերձ ցույց է տալիս, թե իր առաջին գրական փորձերի մեջ պատանի Թումանյանն ինչքան մոտ ու հարադատ է եղել մեր գրականության մեծ հիմնադրին: Թե կոնկրետ ի՞նչ գործերի մասին է եղել խոսքը, և արդյոք պահպանվել են դրանք թե՛ ոչ, այսօր դժվար է դատել, բայց ժամանակակիցներից մեկը՝ Նգոր հարազատը հուշերի հեղինակին առանձին ասել է, որ «Հովհաննեսի գրվածքները այնքան բարձր բաներ են, որ ինքը կասկածում է, թե դրանք մի գուցե Խ. Աբովյանի անտիպ զրվածքներից են, պատահամբ ընկած այդ պատանու ճանկը»⁵:

Հանրահայտ է ժամանակակիցներից մի քանիսի, մասնավորապես բանաստեղծի կնոջ՝ Օլգա Թումանյանի վկայությունն այն մասին, որ իրենց ամուսնության ժամանակ (1888 թ.) պատանու գրադարանում եղած և իրեն նվիրած ընդամենը մի քանի դրերից մեկը «Վերք Հայաստանին» էր⁶: Իսկ 90-ական թթ. վերջին Թիֆլիսում գործող «Ծիածան» աշակերտական ընկերության անդամների համառ Թումանյանի կարդացած դասախոսությունների մասին (որոնց պահպանված սևագիր հատվածները հայտնի են «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» կամ «Կյանք և դրականություն» վերնագրերով) հուշագիր Մարգարե Ավետիսյանը, ուրիշ տվյալների հետ միասին, հաղորդում է հետևյալը. «Մանուկներ մեր: Նուր հեղինակներից բոլորից բարձր դասում էր Աբովյանին»⁷: Այսուհետև հուշագիրը այդ մասին բանաստեղծի ասածի բովանդակությունը շարադրում է այսպես. «Աբովյանը մեծ գող է, մեծ տաղանդ է: Աբովյանը ինքը ժողովուրդն է. նա իր մեջ մտածնացնում է հայ գյուղացուն իր դարավոր փիլիսոփայությամբ, իր հոգեբանությամբ, իր լեզվով: Աբովյանը մեղանում չի պահապանված էնպես, ինչպես որ պիտի գնահատվեր»⁸:

Կարելի է ավելացնել և ուրիշ փաստեր, մասնավորապես հետևյալը: 1893 թ. Ալ. Մատուռյանի նախաձեռնությամբ փորձ է արվում կազմելու և հրատարակելու Խ. Աբովյանի հիշատակին նվիրված հատուկ ժողովածու: Թումանյանն այդ զրքի համար գրում է բանաստեղծություն Աբովյանի մասին: Բայց այդ ժողովածուն հրատարակել չհաջողվեց, իսկ Թումանյանի բանաստեղծությունն անհետ կորել է⁹:

Շարունակելով այս կարգի փաստերի թվարկումը, փորձենք բացատրել Թումանյանի «աբովյանապաշտության» գրական-պատմական իմաստը:

Ե. Աբովյանի կյանքի և ստեղծագործական ուղու ավարտի (1848 թ.) և Հովհ. Թումանյանի գրական ասպարեզ իջնելու (1890-ական թթ. սկիզբ) միջև ընկած է մոտ կեսդարյա մի ժամանակաշրջան, որի ընթացքում հալ նոր գրականությունն անցել էր դարգացման շատ արդյունավետ ճանապարհ: Այդ տասնամյակներում առաջացան և զարգացան հայ գրականության հիմնական ստեղծագործական մեթոդները՝ ռոմանտիզմն ու քննադատական ռեալիզմը, ձևագործվեց գրական նոր ժանրերի համակարգը: Սկսվեց և մեծ մասամբ ավարտվեց այնպիսի նշանավոր հեղինակների գրական գործունեությունը, ինչպես

4 Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1969, էջ 222:

5 Նույն տեղում, էջ 224:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 329—332:

7 Նույն տեղում, էջ 174:

8 Տե՛ս Ա. Ինճիկյան. Նշվ. աշխ., էջ 498:

Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Սեդենցը, Բաֆֆին, Հ. Պարոնյանը, Գ. Մունդուկյանը, Պ. Պոռչյանը, Ղ. Աղայանը և ուրիշները: Թումանյանը ստեղծագործական և անձնական բազմազան կապերով առնչվում էր հիշյալ գրողներից շատերի հետ, բարձր էր գնահատում նրանց գրական վաստակի ազդեցին և գեղարվեստական արժեքը: Դրանով հանդերձ Թումանյանը միշտ և բոլոր պարագաներում մեք ազգային գրականության մեջ առանձնացնում էր հայատուր: Արքովյանին, հանձին նրա տեսնում էր իր առաջին և ամենամեծ ուսուցչին: Իր մերձավոր նախորդների «գլխի վրայով» նա ուղղակի դիմում էր Արքովյանին, նրա ստեղծագործական ավանդույթներն աշխատում էր ընկալել և շարունակել բազմակողմանիորեն և անմիջաբար:

Արքովյանին Թումանյանը համարում էր հայ նոր գրականության այն հոսանքի նախակարապետը, որը, նրա խորին համոզմամբ, հղել է և մնում է ամենից արդյունավետն ու հեռանկարայինը, և որին նա դասում էր նաև իրեն: Հայտնի է, որ XIX դարի մեր գրական զարգացման մեջ Թումանյանը տեսնում էր երկու հոսանք կամ երկու թև՝ բնաշխարհիկ և տառալսարհիկ, որոնց էությունը նա բնութագրել է այսպես. «Առաջինն այն է, որ ծնվում և սնվում է մայրենի հողի վրա, մայրենի միջավայրում: Նրկորդն այն է, որ կտրված հարկերից զարգանում է օտար երկրի տակ—հայ գաղութներում» (IV, 449)⁹: Գնահատելով հանդերձ տարաշխարհիկ հոսանքի ներկայացուցիչների (Ղ. Ալիշան, Ռ. Պատկանյան, Ս. Շահազիզ) գրական-պատմական վաստակը, հատկապես նրանց հայոենասիրական հուժկու կորովը, Թումանյանն, այնուամենայնիվ, իր ամբողջ համակրանքով բնաշխարհիկ ուղղության կողմն էր: Մեղ հոսանքի մեջ էր նա տեսնում գրականության հիմնական խնդրի՝ ազգային միջավայրի և բնավորության հարազատ պերաստադրության, ժողովրդական բանահյուսության գանձերի յուրացման և օգտագործման ճշմարիտ ուղին: Ըստ Թումանյանի գրական-պատմական կոնցեպցիայի՝ բնաշխարհիկ գրականության նշանավոր ներկայացուցիչներն են Պ. Պոռչյանը, Ղ. Աղայանը, Մունդուկյանը, բայց Արքովյանն է նրա հիմնադիրը, ամենամեծ ու բնորոշ դեմքը, սրի ստեղծագործության մեջ առավել խորությամբ ու լայնությամբ մարմնավորվեցին այդ հոսանքի հնարավորություններն ու համազգային արժեքը: Ահա թե ինչու նա պետք է նորից ու նորից դիմեր սկզբնաղբյուրին, գրականության ժողովրդայնության անաղարտ ակունքին, որը Թումանյանի համար նախ և առաջ Արքովյանն էր:

Սակայն անհրաժեշտ է հիշել, որ արքովյանական ավանդույթները Թումանյանի ստեղծագործության մեջ ոչ այնքան դտնվում են ոճական կամ սյուժետային մակարդակներում, որքան ներթափանցում են գեղարվեստական մրտածողության և կենսափոխակերպության խորքերը: Նշենք այն մի քանի էական գծերը, որոնք գրական ժառանգորդության օրենքով Արքովյանից անցել են Թումանյանին:

Ամենից առաջ, Թումանյանի վրա խոր տպավորություն է թողել և նրա գեղարվեստական սկզբունքների ձևավորման գործում մեծ դեր է խաղացել Արքովյանի վեպի էպիկական և հերոսական ոգին: Թումանյանը, որն սկզբից եկել ասպարեզ իջավ իրեն էպիկական մեծ շնչի բանաստեղծ և ձգտում էր վերակերտել հարազատ ժողովրդի կյանքն ու ազգային ոգին իր ամբողջ լայնության մեջ, իր գրական դասերն ամենից ավելի քաղում էր հենց Արքովյանի վեպից: Իդուր չէ, որ սկսած պատանեկան տառիներին նա «Վեպն» ընկալում էր իրի նորոգյա ազգային վիպերգություն, որի մեջ ողբերգականի կողքին համասար ուժով հանդես է գալիս նաև դյուցազնական ոգին, հերոսության և հայրենասիրական նվիրումի փառաբանությունը: Տարիներ անց նա Արքովյանի վեպի կենսական նյութի և դադափառական պաթոսի այդ բազմաշերտ բովանդակու-

⁹ Հոգ. Մ. Թումանյան. Երկերի ժողովածու վեց հատորով, 1940—1959: Թումանյանի երկերից մեջբերումները կատարվում են այս հրատարակությունից, փակագծում նշելով համապատասխան հատորն ու էջը:

թյունը բնութագրել է այսպես. «Վերք Հայաստանին» և՛ հայրենասիրի ողբ է՝ կսկիծով ու հառաչանքով լիքը, և՛ աղգային դուցազներգություն է, որ ուժ ու հպարտություն է շնչում, և՛ բարերաբովանդի ու փրկվածի ներքող ողողված ուրախության արտասուքներով, երախտագիտական բացականչություններով ու օրհնություններով» (VI, 278—279)։

Եթե Աբովյանի վեպի սոցիալական և կենցաղային պատկերումների զիծը լեռագայում շարունակվեց Պոռչյանի, Աղայանի և հալ գյուղագիրների երկերում, ապա նրա դուցազնական շունչը, անկասկած, ամենից ցայտուն է երևում արտահայտվեց և դարգացավ Բաֆիու պատմավեպերում և Թումանյանի էպիկական պոեզիայի մեջ։ Սկզբնական շրջանի երկերում կարելի է նույնիսկ նկատել Աբովյանին ուղղակի հետևելու օրինակներ։ Այսպես, «Անուշ» պոեմի առաջին տարբերակում (տպագրված 1892 թ.) բանաստեղծի ծավալուն դատողությունները հայրենի գեղաշխարհի անցյալի ու ներկայի մասին, թվում է, զգալի չափով ներշնչված են Աբովյանի վեպից։ Եթե Աբովյանը, իր ժամանակակիցներին աղգային հպարտության և պատմական հիշողության դասեր տալու համար, բաղմիցս ողբերգում է անցյալի հերոսական դրվագներ և անուններ, ապա երիտասարդ բանաստեղծը նույնը անում է ավելի «լուրջ սահմաններում»՝ հայրենի լոռու նկատմամբ։ Հիշենք նախ «Վերքի» երկրորդ գլխի սկիզբը, որ Աբովյանն ընթերցողի հայացքի առջև ցուցադրում է դիցաբանական և պատմական դեպքերի ու դեմքերի մի ամբողջ պատկերասրահ։ «Է՛ն հողը, է՛ն հիանալի աշխարհը, ուրտեղ որ դախտն էր եղեմական, որ որ աստված, լուր որ աշխարհը ջրհեղեղովը երբ որ կործանեց, հայոց սուրբ Մասսա սար միայն արժան տեսալ, որ նոյան տապանը նստի ու Հայոց երկրիցը էլ ետ մարդիկ բաղմիցս ողբերգը էլ շինություն քցեն», — այսպես սկսելով իր պատմական շեղումը, Աբովյանն այնուհետև, իբրև հայրենիքի անցյալ մեծ փառքի վկայություններ, մեծ մասամբ սեղմ, բայց դիպուկ բնութագրումներով, հիշատակում է Հայկին և Բելին, Արային ու Շամիրամին, Ջարմալին ու Պարույրին, Տիգրանին և Հաննիբալին, Տրդատին և Գրիգոր Լուսավորչին, Վարդան և Վահան Մամիկոնյաններին, Ռուբինյան և Բագրատունյան հարստությունները... Եվ նույն սկզբունքով են զարգանում պատմական հիշողությունները լոռու մասին «Անուշի» առաջին տարբերակում։

Այս ձորերումն էր, որ Բագրատունին
Բախտի հետ խաղաց լուր խաղը վերջին,
Սեզ Տուտեղդին, Օհան Օձնեցին
Հայրենյաց պաշտպան սուսերն օրհնեցին.
Այստեղ տակավին պապական խոսքով
Ջրույց է անում ձեր շինականը,
Թե այս ձորերում պարսկատանջ բազկով
Կոխվ է արել Մամիկոնյանը.
Կոխվ է արել հավատի համար
Ընդդեմ անօրեն թրջնամիների,
Կառուցել ճերմակ, բարձրաբաշ տաճար
Իբրև պահպան իրան աշխարհի (II, 320)։

Ինչպես տեսնում ենք, նման են պատմական հիշողությունները ներկալի հետ կապելու բուն սկզբունքն ու միտումը, միայն թե Աբովյանի դատողությունների դաշտը ամբողջ պատմական Հայաստանն է, իսկ երիտասարդ բանաստեղծինը՝ հայրենի լեռնաշխարհը։

Մակայն այսպիսի կոնկրետ նմանություններից ավելի կարևոր է այն դրական-պատմական իրողությունը, որ, ինչպես ասվեց, Թումանյանին էր վիճակված լինելու Աբովյանի վեպի դուցազներգական գծի լավագույն ժառանգորդն ու շարունակողը։

Եվ նույնը կարելի է ասել դեպի ժողովրդական բանահյուսությունը ունեցած վերաբերմունքի մասին։ Հայ նոր գրականության պատմական ընթացքի էա-

կան զծերից մեկն այն է, որ զարգացման բոլոր փուլերում՝ Աբովյանից մինչև Թումանյան և Խաչակյան, ժողովրդական բանահյուսությունն ակտիվ և բազմակողմանի մասնակցություն է ունեցել, իհարկե, ժամանակի մեջ փոխելով իր դերն ու հունկցիաները: Սակայն այս իմաստով ևս Աբովյանն ու Թումանյանը որոշակիորեն առանձնանում են, իբրև այնպիսի գրողներ, որոնց ստեղծագործության համակարգում ժողովրդական բանահյուսության նշանակությունը բացառիկորեն կարևոր է ու բխստորոշ:

Աբովյանն առաջին հայ գրողն էր, որն առաջադրեց գրականության և ժողովրդական բանահյուսության փոխհարաբերության որոշակի ըմբռնում և հետևողականորեն կիրառեց այն իր գրական գործունեության մեջ: Կարելի է ասել, որ խնդրի աբովյանական ըմբռնումը շատ կողմերով կանխում էր այն, ինչ ավելի քան կես դար հետո հաստատում էր Հովհ. Թումանյանը, ժողովրդական բանահյուսությունը համարելով «մեր գրականության հարազատ հոգն ու պատվանդանը» (VI, 66): Դեռ տասնամյակներ առաջ Արամ Ղանալանյանը գրել է. «Իրպես ժողջան մի սերմնացան, թաղելով իր ձեռքը աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործության հատիկներով սուղեցուն իր բանահավաքի դոգանքը՝ մեջ, Աբովյանն առատորեն շաղ է տվել այդ հատիկները հայրենի գրականության խոսքի անդաստանում»¹⁰: Մենք կարող ենք շարունակել գիտնականի պատկերավոր խոսքը և ասել, որ տասնամյակներ անց Թումանյանը եղավ այդ անդաստանը մշակող և ժողովրդական ոգու պանծերով ճոխացնող ամենամեծ հայ գրողը:

Աբովյանի և Թումանյանի մոտեցման ընդհանրությունը ցույց տալու համար բավական է համեմատել մեկական ասույթ: «Նախաշավիղ» դասագրքի առթիվ գրած գերմաներեն նախաբանում Խ. Աբովյանն ասում էր. «Գրականությունն տեսակետից, առհասարակ, մի թանկագին գանձ կլինեք, եթե մարդ ազատ ժամանակ և միջոցներ ունենալ ի մի հավաքելու այն բոլոր երգերը, պատմվածքները, անեկդոտները և ասացվածքները, որոնք տարածված են այստեղ հասարակ ժողովրդի մեջ...»¹¹: Վաթսուն տարի անց Թումանյանն ասույթում էր նույն մեծ մտահոգությամբ, երբ 1901 թ. մի նամակում ասում էր. «Բայց որքան որքան մեծ բան է, եթե գրողը կարողանա ճանապարհորդել ուսումնասիրել իր ժողովուրդը, ուսումնասիրել նրա ավանդությունները, լեզուն, աղանդները: Սաստիկ զգում եմ այս կարիքը ամեն անգամ, երբ լինում եմ ժողովրդի մեջ—ծո՛վ է, ծո՛վ» (V, 187):

Մտքերի ակնհայտ նմանությունը բխում է ժողովրդի կյանքի, նրա հոգեվոր աշխարհի և բանահյուսական արժեքների հետ ունեցած անխղիչ կապերից. որոնք էսպես հատուկ էին և՛ Աբովյանին, և՛ Թումանյանին: Այստեղից են գալիս նաև նրանց կենսագիտությունների մի շարք համանման դժերը: Բերենք միայն մի երկու օրինակ:

«Վերք Հայաստանի» վեպի շատ էջերում սփռված են դատողություններ ու պատվիրաններ մարդասիրության և բարության մասին: Շատ ղեպքերում գրանք կարծեք թե կանխում են Թումանյանի նշանավոր մտքերն աշխարհի և մարդու անցավորության, ժամանակի հավերժության մեջ մի ակնթարթ տևող մեր կյանքն ուրախ և խաղաղ անցնելու, միմիայն բարի գործով անմահանալու հնարավորության մասին: Այսպես, դիտելով բնության անսահման բազմազանությունը և զեղեցկությունը, Աբովյանի գաղափարական խոսսափողը՝ Աղասին, ասում է. «...Վայելի՜ր էստոնք, հողածին մարդ, բարի կա՛ց, բարություն արա՛» (56): Նույն կենսագիտություններն արտահայտվում է նաև հառաքակ գեղջուկների շուրթերով. «Մարդ ինքը պետք է լավություն անի, որ աստված էլ նրա բանն հաջողի... Մարդ ինչ անի, է՛ն իր առաջը կգա: Լավություն կանես՝ լավություն կտեսնիս, վատություն կանես՝ վատություն... Խո՛նչ պետք է տա-

¹⁰ Ա. Ղանալանյան. Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը. Երևան, 1911, էջ 27:

¹¹ Խ. Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. V, 1950, էջ 47:

սինք էս փուշ աշխարհքիցը. դարտակ էկել ենք, դարտակ կերթանք» (71): Այս կապակցությամբ ինչպե՞ս չհիշել թումանյանի քառյակի տողերը, որոնք ասեք ուղղակի արձագանքում են Աբովյանի մտքերին. «Ի՛նչ են տարել նըրանք կյանքից, թե ի՛նչ տանեն դու քեզ հետ, խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ»:

Ինչպես հետագայում թումանյանը, Աբովյանը ևս բարոյական և մարդասիրության իր րմբոնումներին հաճախ տալիս է մի յուրօրինակ բնապաշտական երանդ և համապարփակ շափեր. «Երկնքի արեգակի պես, երկրի հողի պես, դու, ուսածո պատկեր, բարի կա՛ց, բարոյություն արա՛, քեզ պահիր, լավություն արա...» (192): Բնությունն իր գեղեցկությամբ և ներդաշնակությամբ սերշնչում է մարդասիրություն, գթաստ և իմաստուն հալացք կլանե՞լ նրկատմամբ, — «Վերքի» մեջ բաղմիցս արտահայտված ալս համոզմունքը հետագա շրջանի հայ դրողներից ամենից ավելի բնորոշ է թումանյանին (հիշենք հատկապես նրա բալլադներն ու քառյակները): Եվ մի՞թե ուղղակի կամուրջ չի սկսվում թումանյանի նշանավոր ասույթի՝ «Մարդու գործն է միշտ անսո՛հ», և Աբովյանի վեպի «Զանգի» հավերժացած համաստված իմաստության մեջն. «Բո՛ղո՛ւ զո՛ր ըծբր, ըծ զո՛ր ըծբր միայն ըծ անունը կպահեն» (310):

Աբովյանական շատ բան է անցել թումանյանին, — իհարկե, մեծ մասամբ տարերայնորեն, իրեն ժողովրդական մտածողության յուրացման հետևյալներ, — նաև նահապետական գյուղացու ըմբռնումներն ու կենսավերաբերմունքը, հատկապես նրա առաջածնունդությունը, հուրասիրությունը պատկերելիս: Այսպես, աչն, ինչ թումանյանը ներկայացնում է «երկաթուղու շինությունը» հայանի պատմվածքում Ուհանես բիժու արարքներով և խոսքերով («Մեր աշխարհումը դառիրից հացի փող չեն առնիլ, կը տեսակ աղաթ չլա»), իր նախօրինակն ունի Աբովյանի վեպի տարրեր մասերում լայնորեն արտադրված համամասն հոգեբանության մեջ, որը նույնպես ներկայացվում է նահապետական գյուղացու շուրթերով: Ահա մի քանի տող վեպի երրորդ մասից. «Հաց ենք դատում, որ մենակ մե՛նք ուտենք, ու չորս պատերը տեսնին. է՛նպես հացը հարած րի... Ի՛նչ տուն, ի՛նչ օջախ, որ օդը տասը սղթատ ու ձամփորդ շմանին, չկշտանան: Էլ է՛ն տանը բարաքյա՞թ կլլի: Էլ է՛ն դաշտը պտուղ կուտ» (232):

Այսպես, Աբովյանն ու թումանյանը մի անգամ չէ, որ «ծանակցում են» իրար, և ալը երևույթի մեջ դուգակցվում են զրական ժառանգորդությունն ու ժողովրդական մտածողության ակունքներից սնվող երկու դրողների օրվերի ընդհանրությունը:

Մի էական տիպարական նմանություն էլ կա Աբովյանի և թումանյանի միջև, որը պայմանավորված է զրական-պատմական պրոցեսում նրանց բնական ըմբռնությամբ կարևոր դերով: Իր վիթխարի տաղանդի ուժով Աբովյանը լուծեց հա՛յ նոր պրականության սկզբնավորման հետ կապված բազմազան խնդիրներ, որոնցից մեկը (ու թերևս դժվարագույնը) գեղարվեստական մեթոդի հարցն էր: Ժամանակի պրական-պատմական իրադրությունը և խնդիրները, ինչպես նաև սեփական ստեղծագործական նախասիրությունները Աբովյանին մղեցին համադրելու իրականության գեղարվեստական արտացոլման բազմազան սկզբունքներ ու եղանակներ: Այդպես ծնվեց նրա ստեղծագործության և նատակապես «Վերք Հայաստանի» վեպի խիստ ինքնատիպ, սովորական պատկերացումների մեջ չպարփակվող մեթոդը, որի էությունը պետք է որոնել նախ և առաջ նրա համադրական բնույթի մեջ: Իրոք, Աբովյանի երկերում, ամբողջական համակարգից անջատելու և առանձնացնելու դեպքում, դժվար չէ մատնանշել տարբեր գեղարվեստական մեթոդների՝ ումանտիզմի և սենտիմենտալիզմի, ռեալիզմի և նատուրալիզմի, ինչպես նաև ժողովրդական էպոսի հիպերբոլիկ և ֆանտաստիկ պատկերման սկզբունքների շատ որոշակի արտահայտություններ: Մակաչն նշված բոլոր տարրերը հանդես են գալիս բնական համադրությամբ, կազմելով մեկ միասնական համակարգ, որի մեջ գերակշռողը

գեղարվեստական մտածողության և պատկերման ռոմանտիկական սկզբունքներն են:

Աբովյանից հետո հայ գրականության զարգացումն ընթացավ գեղարվեստական մեթոդների տարբերակման և առանձնացման ճանապարհով: Ընդամենը նշանակալից է այն իրողությունը, որ Աբովյանի ստեղծագործությունը, առաջին հերթին նրա վեպը դարձավ սնուցիչ աղբյուր հետագա շրջանի հայ գրականության ոչ միայն ռոմանտիկական (Ռ. Պատկանյան, Բաֆֆի, Մուրադյան), այլև ռեալիստական ուղղության (Պ. Պոռյան, Ղ. Աղայան, գյուղագիրներ) համար: Սակայն հայ նոր գրականության վերջին փուլում՝ XX դարի սկզբին, մենք նորից տեսնում ենք տարբեր գեղարվեստական մեթոդները համադրելու փորձեր, որն ամենից ցայտուն աբստրակտիզմից Թումանյանի ստեղծագործության մեջ: Ժառանգելով ոչ միայն ռեալիզմի, այլև ռոմանտիզմի ստեղծագործական ավանդույթները, Թումանյանը զուգահեռ գրանք գեղարվեստական նոր համակարգի մեջ, որը ներքուստ շատ բազմազան է և հարուստ: Աբովյանից հետո թերևս ոչ մի ուրիշ հայ գրող այնպիսի բազմազան ստեղծագործական ներկայակերպ չի ունեցել, ինչպես Թումանյանը: Բայց եթե Աբովյանի գեղարվեստական համակարգի մեջ առաջատար սկզբունքը, ինչպես ասվեց, ռոմանտիզմն էր, ապա Թումանյանի ստեղծագործական մեթոդում բացահայտորեն գերակշռող է դառնում իրականության ռեալիստական ընկալումն ու արտացոլումը: Համապատասխանաբար Թումանյանը հայ գրականության մեջ հաստատեց լիարժեք ռեալիստական ժողովրդայնության սկզբունքը, շատ ավելի մեծ ձեռք բերեց պոեզիան իրական կյանքին՝ նա, կարելի է ասել, տրամաբանական ավարտի հասցրեց Աբովյանի հիմնադրած գեղագիտական սկզբունքները՝ հենվելով ռեալիստական արվեստի լայնահուն հիմքի վրա: Ռոմանտիզմի բացահայտ գերակշռությունից դեպի ռեալիզմի անվերապահ հաստատում՝ երկու դեպքում էլ պահպանելով գեղարվեստական ստեղծագործության ներքին անսպառ բազմազանությունը, — այսպիսի ուղի է անցել հայ գրականությունը Աբովյանից մինչև Թումանյան: Այդ տեղաշարժի մեջ երևում են ազգային գրականության ավելի քան կեսդարյա զարգացման արդյունքները, ինչպես նաև երկու գրողների ստեղծագործական խառնվածքի, նրանց առջև կանգնած խնդիրների տարբերությունը:

3

Թումանյանի գրական ժառանգության մեջ կա մի երկ, որն «արավանդական» է իր բոլոր հատկանիշներով՝ թեմայով ու կերպարներով, նկարագրություններով ու ոճական շատ գծերով: Խոսքը վերաբերում է «Քաջերի կյանքի» ակնարկ-պատմվածքին, որն առաջին անգամ լույս է տեսել 1894 թ. «Հորիզոն» գրական հանդեսում: Այս երկը, կարելի է ասել, գրված է «վերք հայտնությանի» վեպի մոտիվներով, իբրև նրա մի յուրօրինակ տարրերակ: Իսկական է ասել, որ պատմվածքի մեջ իրեն գործող անձինք հանդես են գալիս Աբովյանի վեպի գլխավոր հերոսը՝ Աղասին, ինչպես նաև մյուս ծանոթ անունները՝ Կարոն, Ղսեղյի Սեհասը և Օվագիմ Թումանյանները, գործողությունը կատարվում է 1826 թ. ռուս-պարսկական պատերազմի նախօրյակին, Լոռու ձորերում: Հիմք ընդունելով հայրենի գյուղում պահպանված ավանդություններն ու վրդյոցները, Թումանյանն ասեք ուզում է լրացնել Աբովյանի վեպը, նրա պլանավոր հերոսի կյանքի տարեգրությունը մի անհայտ (ճիշտ է, Աղասու համար դժվարին և ոչ հաճելի) դրվագով: Եվ այդ առումով, և՛ իր նկարագրություններով ու ոճական հատկանիշներով Թումանյանի պատմվածքը, հիմնովի, գտնվում է «վերքի» ձգողական հզոր դաշտում, այն պատկանում է Աբովյանի վեպի անմիջական ազդեցությամբ կյանքի կոչված եզակի դործերի թվին:

Այդ հանգամանքը նկատվեց անմիջապես, թեև սկզբում միտումնավոր քննադատության կողմից արժանացավ բացասական գնահատականի: Այսպես, «Տարաղի» էջերում «Հորիզոն» ժողովածուի մասին տպագրված գրախոսական-

նի հեղինակը (Եր. Պալյան), փաստորեն մերժելով հանդեսն ամբողջությամբ և նատկապես նրա մեջ զետեղված Թումանյանի արձակ և չափածո երկերը, «Բաջերի կյանքից» պատմվածքի մասին գրում էր. «...Զգիտեմ ի՞նչ բան է, նախերգանքն «Վերք Հայաստանի»-ի, թե՛ այլ բան, իսկ Ձորագետի նկարագրությունն էլ նմանողություն է Արովյանի Զանգու գետի նկարագրության...»¹²։

Մեկ տարի անց՝ 1896 թ. սկզբին Թումանյանը, որն ըստ երևույթին բարձր էր գնահատում իր այդ պատմվածքը ոչ միայն կենսագրական, այլև գեղարվեստական բովանդակության համար, փորձեց վերահրատարակել այն առանձին գրքուկով։ Բայց այդ փորձը հանդիպեց գրաքննության արգելքին և ձախողվեց (V, 81)¹³։ Ըստ երևույթին, ազդային ազատագրական գաղափարախոսության նկատմամբ հալածանքի պայմաններում գրաքննչին մտավախուշ էր պատճառել պատմվածքի մեջ իշխող հերոսական-դյուցազնական ոգին, քաջություն և խիղախություն փառարանությունը։ Անցան շատ տարիներ, մինչև որ լիաձայն խոսվեց Թումանյանի այդ ստեղծագործության բարձր արժանիքների մասին։ Այդ առումով բնորոշ են Լևոնի Հուշերի (1923 թ.) հետևյալ տողերը. «Կարգացել էր Ալատեղ Հովհաննեսի դուրսից ոտանավորը չէ այլևս, պրոզան է։ Բայց ի՞նչ բարձր վարպետություն է պրոզայի մեջ։ Դասական դյուցազնականության մի սքանչելի նմուշ, կարծես Հոմերոսից են այդ պատկերաչափները, այդ աղնիվ և բնտիք ոճը թափվել իգիթ լուսնի Օվակիմի պատմության մեջ»¹⁴։

«Վերքի» տիրական հասցքը և պատկերվող նյութի ընդհանրությունը, իրոք, ողել են Թումանյանին այս պատմվածքում (միակ օրինակը նրա ողջ ստեղծագործության մեջ) հաճախ դիմելու արովյանական ոճավորման։ Բայց դա երբեք չի դառնում մեխանիկական իմիտացիա, այլ բնականորեն բխում է ներկայացվող իրադրությունից և հեղինակային վերաբերմունքից։ Դրանում կարելի է համոզվել, եթե նույնիսկ վերցնենք պատմվածքի ամենից արովյանական հատվածը՝ Ձորագետի նկարագրությունը.

«Ան սորնթաց Ձորագետը—արշուն է տանում։ Մութը ճալիցն, երկու մտցների տրանքից դուրս պրծած, սկավաջրի նման պղտոր, պրպրած ու փրփրած, տակոպակ արած ծառ ու մացառ, քար ու քոթուկ իրար խառնած, առաջն առած, զոռալով, թշտալով, վշտալով, տեղ-տեղ, ուղած տեղերը թեկեր փռելով, առջախնդուկի անելով, կոկին իրան հավաքելով, ուռչելով ու քարերի գլխավր թուշլով-արթնում խաղալով, ցալքուն տալով, ցալիս է Մագմանա զյուղումը կանգնում, պախա գալիս, շունչ առնում, դարան մտնում, և հանկարծ վերկենում, իրան թուփ արած, թափ առած, զողու նման հասնում, դարկում չորած Ապանտարի տպառած ծնկներին, ու քինթր ջարդած, լացակնքած, պրախր բորելով, թոնթորելով, գալիս է սուր նշանի դիմացն երեսին խաչակնքում, սիրտը վեր նստացնում, ու շարական ասելով աջ կողմի վրա պտտվում, մտնում Հաղրատ-Սանահնա ձորերը» (III, 31)։

Այս նկարագրության բնույթի, ուժի և տրամադրության, մանավանդ բույական ձևերի առատության մեջ անմիջապես զգացվում է Զանգվի արվեստական նկարագրության շունչը (հիշենք այդ նկարագրության սկիզբը. «Ինչպես մի կոտորած վիշապ՝ եռկնքիցը թռած, գլխիվեր ճողովակ, մեկ տուտը Լեանի հանդարտ ծովումը, մեկ տուտը Արաղի քրքրված դրաղումը, սառ ու ձեռ կիշոր տալով, քանդելով, տապալելով...» և այլն)։ Մի նմանություն, որ նկատել էր նաև «Տարաղի» անբարձրագույն քննադատը, այն համարելով սյառիկ նմանողության արդյունք։ Իրականում մենք գործ ունենք գրական ոճավորման հաջող օրինակի հետ, որը օգնում է վերստեղծելու արվեստական միջավայրի, տրամադրության, ուժի հարազատ զգացողությունը։

Նկատյալ «Բաջերի կյանքից» պատմվածքը մեր առջև մի ուրիշ, ավելի

¹² «Տարաղ». 1895, № 3, էջ 43։

¹³ Այդ մասին տե՛ս նաև Լ. Ինձիկյանի նշված գրքում, էջ 350—351։

¹⁴ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 87։

դժվարին խնդիր է դնում, որն առերևույթ անհարիր է Աբովյանի վեպի և նրա հերոսի նկատմամբ Թումանյանի տածած պաշտամունքին: Իրոք, շատ բան այստեղ առաջին հայացքից թվում է անհասկանալի, հանելուկային, իսկ աբովյանական թեմայի նոր մեկնաբանությունը կարող է թվալ «հակաբովյանական»: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ավելի մանրամասն վերլուծել պատմավածքի սյուժետային բովանդակությունը, մանավանդ որ մինչև այժմ աչդպիսի փորձ չի արվել, բանը սահմանափակվել է միայն ընդհանուր դատողություններով և գնահատականներով, իսկ նրկի հետ կապված «կնճռոտ հարցերը» սովորաբար շրջանցվել են:

Նախ հիշեցնենք, թե կոնկրետ ինչ է պատմվում «Քաջերի կյանքից» ստեղծագործության մեջ: Քանաքեռում կատարած իր հայտնի քաջագործությունից հետո ուսական սահմանը փախած և պարտիզանական գործողությամբ դբադվող Աղասին ու նրա ընկերները հրավիրվում են Դսեղ գյուղ՝ տեղի իգիթների հետ հանդիպելու և խոսել ավազներից պատիվ ստանալու համար: Սակայն երբ խոսել ձորում խնջուքի ժամանակ ծերունի Մեհրաբը հետաքրքրվում է Աղասու ծնողներով և իմանում է, որ նրա հայրը տարիներ ի վեր տանջվում է երևանի բերդում, իսկ մայրը, կինն ու երեխաները մնացել են թշնամու գերությունից: Բնալվում է ծերունի նահապետի դեմքը, և նա դառնովյամբ բացակայում է. «Ափսո՛ս իմ հաց... ափսոս իմ օջաղ... մենք սրա՞ն ենք իգիթ ասում, որ իրա՞ն վառած կրակում ուրիշին թողանի էրվելիս, ինքը զուլսն աղատի, փախչի սարեբն ընկնի... ի՞նչան նամուսը—ծնողը, կնիկը, երեխանքը վեր գցի թշնամու ուռչին...» (III, 33—34):

Այս բացասական բնութագիրն ավելի է ուժեղանում, երբ հավաքվածները, համաձայն լինելով նահապետի խոսքերի հետ, թողնում հեռանում են խնջուկների վայրից, իսկ ամայացած բնությունը դառնում է կատարվածի հուզական-գաղափարական գնահատականի ուղղակի մասնակիցը,—գեղարվեստական մի հնարանք, որին Թումանյանը սովորաբար դիմում է երևույթների իմաստավորման բարձրագույն պահերին: Ահա պատմվածքի վերջը. «Մի քանի վայրկյանից հետո դարձյալ ահագին ձորը մնաց մենակ Չորադետի գոռոցներին, որոնք միացած, կառծես, մոնշում էին «ափսո՛ս...» (III, 34):

Ի՞նչ է սա՞ Աբովյանի կողմից այնքան ոգևորությամբ, ներշնչանքով կերտված և հայ ժողովրդից այնքան սիրված հերոսին «պսակադեմելու» փո՞րձ, թե՞ նրա իրական նախատիպին նոր մեկնաբանություն տալու ցանկություն: Անտարակույս, «Քաջերի կյանքից» պատմվածքի այս դրվագները հիմնվում են իրական եղելության վրա, որի մասին զրուցներն անցել են սերլնդից սերունդ և հասել են Թումանյանին: Իր ինքնակենսագրական նոթերում նա այդ մասին գրել է. «Ճատիս պատմություններից—Աղասու մասին»¹⁵: Ժողովրդի մեջ պահպանվող զրուցը ամրապնդվում է «Վերքի» հետևյալ տողերով, որոնք դարձել են Թումանյանի պատմվածքի բնաբանը. «Քաջ լողցիք էլ որ իմացան, էլ զինջություն չունեին, սրանք էլ էին ուզում նրանց իրանց մեջը բերեն, պատիվ տան: Մեկ ամսաշափ էլ էստեղ մնաց լԱղասին]» (235): Թումանյանը վերաբերվել է հայրենի գյուղում հիշվող պատմությունը, Աղասու վարքագծի այն գնահատականը, որ տվել են իր հեռավոր նախնիները: Այդ գնահատականի մեջ նա տեսնում է ասպետական քաջության և անձնազոհության մասին հին նահապետական ըմբռնումների արտացոլումը, որոնց մեջ Թումանյանի համար շատ գեղեցիկ և ազնիվ բան կա: Ահա թե ինչու երիտասարդ գրողը անվերապահ համակրանքով է ներկայացնում ծերունի Մեհրաբին, իր լսածի նկատմամբ նրա հոգեբանական սուր ռեակցիան: Բայց դա ճշմարտություն միայն մեկ կողմն է: Կա նաև մյուս կողմը, առանց որի անհնար է ճիշտ գնահատել Աբովյանի հերոսին և նրա նախատիպին:

Բանն այն է, որ Մեհրաբն ու նրա շրջապատի մարդիկ դեկավարվում են միմիայն անհատական սխրագործության հին պատկերացումներով, որոնք

15 Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ. հ. 2, 1969, էջ 410:

Հեն կարող արդեն իրականացվել պատմական այն մեծ ու բարդ իրադարձութիւնների շրջապատւոյտում, ուր նետված է Աղասին: Այլ կերպ ասած՝ Աղասին, ինչպիսի անձնազոհ քայլի էլ որ նա դիմեր, չպիտի կարողանար աղատել հարազատներին պարսկական բռնապետութեան ճիրաններից: Այդ պատճառով էլ նա ընտրել էր միակ ճիշտ ուղին՝ ռուսական զորքի հետ միասին ոչ միայն իր հարազատների, այլև հայ ժողովրդի ազատագրման մեծ գործին մասնակցելը, որի ժամանակ նա բազմիցս դրսևորում է խիզախութեան և անձնազոհութեան օրինակներ: Այսպիսով, եթե բարոյական արդարութիւնը ծերունի Մեհրաբի կողմն է, ապա իրական և վիպական Աղասին մեզ ներկայանում է իբրև պատմական ճշմարտութեան կրող: Թումանյանի պատմվածքում բախվում են այդ երկու պատկերացումները՝ և՛ արտաքուստ, և՛ հերոսի հոգու մէջ: Թեև Աղասին ոչ մի խոսք չի ասում ի պատասխան Մեհրաբի հանդիմանութեան, բայց հոգու խորքում պետք է ընդունենք նրա իրավացիութիւնը, քանի որ ինքն էլ դատարարակվել էր այդ նահապետական ըմբռնումներով: Բայց ահա պատսական հանգամանքներ ստիպում են այլ կերպ դործել, սպասել ազատագրման հարմար սլահին: Չէ՞ որ Թագուհու առևանգման հետ կապված ողբերգական պատմութիւնը նրան համոզել էր, թե ինչ ծանր հետեանքներ կարող է ծնել միայնակ ձեռնարկված անխոհեմ, թեպետև հերոսական, անձնազոհ արարքը: Ահա թե ինչու Աղասին վեպում, դեռ նախքան իր ողբերգական վախճանը, արդեն դրված է ողբերգական ծանր կացութեան մէջ, որը բխում է նրա չալրենասիրական մեծ մղումների շուտափուլ իրականացման անհնարինելի զիտակցութիւնից: Այդպիսի ողբերգական կերպար է Աղասին նաև Թումանյանի պատմվածքում, թեև, ի տարբերութիւն վեպի, նա այստեղ ոչ մի բառով չի արտահայտում իր հոգեկան մեծ խռովքը:

«Քաջերի կյանքից» պատմվածքը հետաքրքիր փաստ է Թումանյանի գրական կենսագրութեան մեջ նաև երիտասարդ գրողի ստեղծագործական կողմնորոշման առումով: Գեղարվեստական արձակի առաջին իսկ փորձերի մէջ, որոնց թվին է պատկանում նաև այս գործը, արդեն որոշակիորեն արտահայտվեց հեղինակի ռեալիստական ստաժողութիւնը, որով նա ինչ-որ տեղ «բաժանվում էր» իր մեծ նախորդից: Դա մենք տեսնում ենք նաև «Քաջերի կյանքից» պատմվածքում. անդադառնալով արեւմտական թեմայի ու կերպարների, Թումանյանը նրանց տալիս է «վերքի» հեղինակից բոլորովին շեղվող լուծում: Բայց դա արդիւնք է հերոսին դիտելու և գնահատելու խնդրում բազմակողմանի ռեալիստական մոտեցման: Թումանյանը օբյեկտիվորեն վերարտադրում է իր նախնիների հայացքը՝ առանց հեղինակային որևէ միջամտութեան կամ բարեխառնութեան, հայացք, որի մեջ արտահայտվել է քննադատական վերաբերմունք դեպի Արեւիկայի իդեալականացրած կերպարը: Անշուշտ, դրանով նա չէր ուզում ընդհանրապես փոխել համաժողովրդական տարածված պատկերացումը Աղասու մասին, այլ առաջադրում էր կերպարի հատկանիշների բազմակողմանիութեան, նրանց տարբեր դիրքերից դիտելու և գնահատելու ռեալիստական սկզբունք:

Այսպիսով «Քաջերի կյանքից» պատմվածքը մի շատ հետաքրքիր օրինակ է, որի մեջ միախառնվում են «Արեւիկան—Թումանյան» առնչութեան բազմադան ձևեր. թեմայի և կերպարների ընդհանրութիւն, լեզվի և նկարագրութիւնների բաժանման վառ ոճավորում, բայց և նյութի սկզբունքորեն նոր մեկնաբանութիւն, ռումանտիկական իդեալականացման փոխարեն՝ ռեալիստական օբյեկտիվ պատկերում: Մի խոսքով՝ ստեղծագործական ակնհայտ նմանութեան և սուր տարբերութեան բնական միաձուլում մեկ պատմվածքի մեջ, որի քնննութիւնը առիթ է տալիս խոսելու գրական-պատմական բազմազան խնդիրների մասին:

Բնական է, որ իր գրական-քննադատական և հրապարակախոսական ելույթներում ևս Թումանյանը բաղմիցս անդրադարձել է Աբովյանին: Կարելի է ասել, որ Սայաթ-Նովայի հետ միասին Աբովյանն է այն հայ գրողը, որով ամենից շատ է զբաղվել Թումանյան քննադատն ու հետադիտողը: Ընդհանուր առմամբ նա լրիվ կամ մասնակի չափով Աբովյանին նվիրել է մոտ մեկ տասնյակ հոդված և ուսումնասիրություն, որոնք կազմում են նրա քննադատական և գիտական ժառանգության մի կարևոր մասը: Ավելացնենք, որ 1899 թ. տպագրության հանձնված «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» հոդվածն ունի «և. Աբովյանի հիշատակին» ենթավերնագիրը (IV, 61), իսկ դրանից մեկ տասնամյակ հետո գրած «Երևանի առումը և հայոց պատմությունը» սևագիր աշխատությունն սկսվում է այսպիսի ընծայականով. «Վերք Հայաստանի»-ի 50-ամյակի առիթով նվեր հաշատուր Աբովյանի հիշատակին» (VI, 297): Այդ ուշադրությունը, բացի Աբովյանի նկատմամբ անձնական մեծ սիրուց և հետաքրքրությունից, պայմանավորված էր նաև գրական-պատմական և հասարակական մի շարք հանգամանքներով:

Ամենից առաջ, Թումանյանն այն հաստատ համոզմանն էր, որ Աբովյանից և նրա հռչակավոր վեպից է սկիզբ առնում հայ գրականության նոր շրջափուլը: «Այս այն երջանիկ գիրքն է,— գրել է Թումանյանը «Վերքի» մասին 1908 թ.,— որ հայոց նոր աշխարհիկ գրականության առաջին հիմնաքարն է ընդունված» (IV, 94): Իսկ մի քանի տարի անց ավելացնում էր. «Մի գիրք, որ հայ ժողովուրդը պաշտում է տակավին ու իր նոր գրականությունը հիմնաքարն է համարում» (VI, 203): Ահա թե ինչու նա 1908 թ. Աբովյանի վեպի առաջին տպագրության կեսդարյա հոբելյանի առթիվ մամուլում հանդես եկավ «հայոց նոր գրականության սկզբնավորման հիմնամյակը» լանդորեն նշելու առաջարկով: «Մի հոյակապ առիթ՝ մի մեծ համադգային տոն կազմելու, վերաբարձրելու, կենդանացնելու շատ նվիրական ղգացմունքներ ու ղաղափարներ, որոնցով ոգևորվել է, այո՛, ժողովուրդը, և մի ընդհանուր հաշիվ տեսնելու այն գեղեցիկ երկերի ու գործերի, ինչ որ կարողացել է տալ հայի հանձարը էս հիսուն տարում... Պետք է կատարել այդ մեծ տոնը,— շարունակում է Թումանյանն իր միտքը,— որ ինքնըստինքյան կունենա բարոյական հազդին նըշանակություն և համատարած հայ ժողովրդի ընդհանուր ոգևորություն, լավագույն հիշողությունների ու պայծառ հույսերի օրը կլինի: Այդ տեսակ օրեր շատ չեն լինում ժողովուրդների կյանքում: Պետք է տոնել» (IV, 94): Այս տողերում, թեև կողմնակի ձևով, տրված է նաև Աբովյանի ստեղծագործության, իբրև «հայի հանձարի», հարադատ ժողովրդի անցյալի և ապագա հույսերի յուզագուն մարմնավորման սեղմ և դիպուկ բնութագիրը:

Թումանյանի համար այդ հանգամանքը սկզբունքային նշանակություն ուներ, և դա հատուկ ուժով առտահայտվեց Աբովյանի արձանի ստեղծման առթիվ գրած հոդվածների մեջ («Ամենքը միասին», 1910, «Արձան հաշատուր Աբովյանին», 1911, «Անգիտակից թշնամիներ», 1913, «Գործի ենք անցնում», 1917 և այլն): Այդ հոդվածների հիմնական միտքն այն է, որ մեծ լուսավորիչ-գրողի արձանը չպետք է դիտել սոսկ իբրև մի աաղանդավոր մարդու հիշատակի տուրք, որ այն ունի շատ ավելի մեծ խորհուրդ: «...Դա հայ ժողովրդի վերքոտ սրտի արձանն է,— գտնում էր բանաստեղծը,— որ կանգնելու է այնտեղ Աբարատի սրբազան դաշտում սերունդներին ու դարերին ի տես, որ տեսնեն թե քանի սուր կա ցցված նրա մեջ, քանի դարդ ու ցավ: Պետք է կանգնի հայիտյան ու անլուսի պատմի աշխարհին հայ տանջանքն ու տենչանքը» (IV, 158):

Շատ նշանակալից է և այն, որ Աբովյանի այդ ապագա արձանը, որ հեռավոր Փարիզում պատրաստում էր քանդակագործ Անգրեստ Տեր-Մարտիքյանը, բանաստեղծը մտովի համադրում է մի ուրիշ արձանի հետ, որը, նրա համոզմամբ, մի օր բաժանալու է Վանա լճի ափերին ի պատիվ նարեկա վանքի մեծ շինվոր բանաստեղծի, որպեսզի երկնքին ու երկրին պատմի հարադատ ժո-

դովրդի «կրակված սրտի» և «տանջված հոգու» մասին: Այսպիսով, Գրիգոր Նարեկացին և Խաչատուր Աբովյանը բանաստեղծի գիտակցության մեջ կանգնում են կողք-կողքի, իբրև առաջին կարգի մեծություններ, իբրև ազգային պատմության և մշակույթի տարբեր դարաշրջանների տիրական դեմքեր, որոնց ստեղծագործության և ճակատագրի մեջ մարմնավորվել են ժողովրդի հոգու և սրտի տառապանքներն ու երազները: Իսկ այդպիսի համազգային մեծությունների արձանները, շարունակում էր իր միտքը Թումանյանը, ոչ թե առանձին մեծահարուստների փողերով պիտի կանգնեն, այլ «ազգի ընդհանրության» ջանքերով: Այդ գործին մասնակցելը պետք է լինի ամեն մի հայի ոչ միայն պարտականությունը, այլև իրավունքը: Բանը ոչ թե փողի քանակն է, ասում էր նա մի ուրիշ հոգվածում, այլ «սիրտը, սերը, զգացմունքը» (IV, 192):

Եվ այս կապակցությամբ Թումանյանը, ինչպես հաճախ է լինում նրա հոգվածներում ու նամակներում, կարծեք թե կողմնակիորեն, հպանցիկ, բայց թեմպոր խոսքի դիպուկությամբ և ծանրակշիռ գիտական տեսության խորությամբ, տալիս է Աբովյանի ժողովրդայնության և համազգային արժեքի հույս: Կապ բնութագիրը. «Նա ամենքինն է ու ամենքը նրա մեջ են» (IV, 158): Ազգային մեծ գրողն իր ստեղծագործության և անձնավորության մեջ կրում է հայրենի երկրի պատմության և հոգևոր աշխարհի էական գծերը և, մյուս կողմից, պատկանում է ժողովրդի հանրությանը, — այս է Թումանյանական բանաձևի իմաստը: Աբովյանի մեջ նա տեսնում էր այդպիսի գրողի լավագույն օրինակ և ինքն էլ ձգտում էր այդ իդեալին՝ իհարկե, հարստացնելով ժողովրդայնության ըմբռնումը ժամանակի պահանջներից բխող նոր կողմերով:

Աբովյանի աշխարհայացքի և ստեղծագործության մի գիծ էլ կա, որը հատկապես մոտ ու սիրելի էր Թումանյանին: Դա Աբովյանի հետևողական և համոզված ուսական կողմնորոշումն էր, հայ ժողովրդի ազատագրության և ազգային վերածնության հեռանկարը ուս ժողովրդի և պետականության օգնության հետ կապելը: Ահա Թումանյանական երկու ասույթ այդ մասին: 1913 թ. բանաստեղծը գրել է. «Խ. Աբովյանը մի մոլեռանդ ուսասեր էր, նրա «Վերք Հայաստանին» հայ ժողովրդի տանջանքի ու տենչանքի արտահայտությունը լինելով հանդերձ՝ միաժամանակ մի ոգևորված ջատագովություն է ուս ազգին և նրա պետական ուժին, և առաջ քաշել Խ. Աբովյանին, կնշանակի հալերի մեջ արծարծել նաև սեր ու համակրանք դեպի ուս ազգն ու ուս պետությունը» (VI, 200): Մեկ տարի անց նա նորից հավաստում էր, թե Աբովյանի վեպը «ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ հայ ժողովրդի վերքի մրմուռի հետ միասին, մի հզոր ջատագովություն ու օրհներգ ուս ազգին ու իր ուժին» (VI, 202—203):

Հայտնի է, որ Աբովյանից հետո հայ ոչ մի ուրիշ գրող կամ գործիչ այնպես հետևողականորեն չի պաշտպանել մեր ժողովրդի ուսական կողմնորոշման գաղափարը, ինչպես Թումանյանը: Թեև նա ապրում և գործում էր Աբովյանից շատ տասնամյակներ անց, բայց XX դարի սկզբին էլ, թերևս ավելի սուր և ողբերգական ձևով, դրվել էր դարձյալ հայ ժողովրդի պատմական գոյության հարցը, և ուսական կողմնորոշման խնդիրը նորից ստանում էր բացառիկ կարևորություն և հրատապություն: Որպես իսկական ազգային բանաստեղծ, որը, Թումանյանի բնորոշմամբ, «իր ժողովրդի սիրտը պետք է լինի» (V, 283), նա խորապես զգում և արտահայտում էր նրա անսխալ բնազդից և դարավոր կենսափորձից ու իմաստությունից բխող այն համոզմունքը, թե փրկության միակ ճանապարհը պետք է լինի ամուր և հավերժական դաշինքը Հյուսիսի մեծ հարևանի հետ: Եվ ամեն անգամ, երբ Թումանյանն արծարծում էր այդ գաղափարը, նա դիմում էր նաև Աբովյանի հեղինակությանը՝ հանձին նրա այս հարցում ևս տեսնելով իր մեծ նախորդին ու դաշնակցին:

Թվում է, զգալի չափով հենց հայ ժողովրդի ուսական կողմնորոշման ավանդույթներն ու արմատները բացահայտելու և դրանք ներկա սերնդի հայացքի առջև դնելու նպատակով էր, որ Թումանյանը ձեռնարկեց մի գիտական մեծ ուսումնասիրություն՝ նվիրված «Վերք Հայաստանի» վեպի պատմական հիմքերին: Այդ անավարտ ուսումնասիրությունը, որի տարբերակներն ու մասերը

կրում են ալլեալլ վերնագրերը («Երևանի կոիվը և Ն. Աբովյանի «Վերք Հայաստանին» իբրև պատմություն», «Ն. Աբովյանի «Վերք Հայաստանին» և 1826 թ. ռուս-պարսկական պատերազմը», «Երևանի առումը և հայոց պատմությունը», «Ն. Աբովյանի «Վերք Հայաստանին» և ռուսաց զինվորական տարեգրությունը» և այլն), հեղինակի կենդանության ժամանակ մնացել է անտիպ, Միայն շուրջ կես դար հետո աշխատության սևագիրը հատվածները հրապարակվեցին Թումանյանի երկերի ժողովածուի 6-րդ հատորում՝ վաստակաշատ գրականագետ Ս.ս. Ասատրյանի կալմած տեքստով և ծանոթագրություններով (տե՛ս VI, 253—356, 458—484)։

Թումանյանն իր սյւս ուսումնասիրությունը սկսել է գրել 1908 թ.՝ «Վերքի» առաջին տպագրության 50-ամյակի առիթով և, ինչպես վկայում է նա 1912 թ. մի նամակում, նրա վրա աշխատել է մի քանի տարի (տե՛ս V, 369), համեմատյալ դեպք՝ մինչև իր երկրորդ ձեռագրվածությունը 1911 թ. վերջին։ Տարբեր առիթներով Թումանյանն իր այդ գործն անվանել է «գրական-պատմական ուսումնասիրություն», «համառոտ պատմական տեսություն», «Վերք Հայաստանի»-ի մասին գրած հոդվածներ» և այլն։ Թվում է, ամենից ճշգրիտը առաջինն է՝ գրական-պատմական ուսումնասիրություն, քանի որ աշխատությունն հիմնական նյութը և նպատակը պրական ստեղծագործություն («Վերք Հայաստանի») և պատմական աղբյուրների բաղմակողմանի համեմատությունն է՝ դրանից բխող եղրակացություններով և ընդհանրացումներով։

Ինչպես դիտական, այնպես էլ հասարակական իմաստով սկզբունքային կտրվածք նշանակություն էր տալիս Թումանյանն իր այս հետազոտությանը։ Իր դրածներն ու մտահղացումները սովորաբար շրջապատին բացահայտ կերպով ներկայացնող բանաստեղծը այս դեպքում մտավախություն է հայտնել, որ իր մտքերը նախքան տպագրվելը կառող են հրապարակվել ուրիշների կողմից (տե՛ս V, 369)։ Թեև Թումանյանը չավարտեց ու չտպագրեց իր այս մեծ ծրագիրը, բայց, բարեբախտաբար, նրա վրա թափած խոշոր աշխատանքն իդուր չանցավ։ Հավաքված գրական-պատմական բաղմաղան նյութերը, աշխատանքի ընթացքում ծագած մտքերն ու եղրակացությունները, նույնիսկ գրածի առանձին հատվածներ բավական լայնորեն օգտագործվեցին 1910-ական թթ. մի շարք հրապարակախոսական հոդվածներում, որոնց մեջ Թումանյանը շարադրեց հայ ժողովրդի պատմական ճակատագրի, մասնավորապես՝ նրա ռուսական կողմնորոշման վերաբերյալ իր ըմբռնումները։ Այդ հոդվածներից են՝ «Երեկվան պատմությունը և այսօրվան իրականությունը», «Ահա թե ինչու» (1912 թ.), «Հայկական հարցն ու իր լուծումը», «Փորձիչը» (1913 թ.), «Կարեւոր հույսն ու դարևոր ճանապարհը» (1914 թ.), «Վան ու Երևան» (1915 թ.), «Արևելքի նոր դարագլուխը» (1916 թ.) և այլն։ Այս հոդվածներում հաճախ են վկայակոչվում Աբովյանն ու նրա ժամանակը, ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների դեպքերը, գուղահեռներ են անցկացվում նրանց և նորօրյա իրականության միջև։ Այսպիսով, Աբովյանի վեպին նվիրված ուսումնասիրությունը Թումանյանի հրապարակախոսության կարևոր հանգույցներից մեկն է, ուր խաչաձևվում են գրական-պատմական բաղմաթիվ խնդիրներ։ Այստեղ անդրադառնանք միայն այն հարցերին, որոնք ուղղակի կապվում են Աբովյանի վեպի և նրա ավանդույթների հետ։

Իատելով անավազտ աշխատության սևագիր տարբերակներից, Թումանյանի մտահղացած գործը լինելու էր մի շատ ինքնատիպ և հետաքրքիր ուսումնասիրություն։ Նրա մեջ ամենայն մանրամասնությամբ պիտի ցույց տրվեր Աբովյանի նկարագրած դեպքերի հավաստիության աստիճանը՝ համեմատելով ռուս-պարսկական պատերազմի մասին զինվորական փաստաթղթերի և ժամանակակիցների հիշողությունների հետ։ «Իմ նպատակն է, — կարդում ենք ուսումնասիրության առաջին էջերում, — ռուսական զինվորական տարեգրությունից վկայություններ բերելով՝ մի համառոտ տեսության մեջ ցույց տալ թե ինչքան ճշմարտապատում է «Վերք Հայաստանին» և, իբրև մի պատմական վեպ, ինչքան մոտիկ ու հարազատ է կենդանի իրականության» (VI, 256)։ Աշ-

խառնությունների հաջորդ բաժիններում ևս, պատմական աղբյուրների հետ համեմատելու հիման վրա, Թումանյանը նորից ու նորից հավաստում է, որ Աբովյանի վեպում պատմված ամեն ինչ «անկեղծ է, լիասիրտ ու ճշմարիտ, որովհետև ինքն է ապրել, աչքով տեսել, ականջով լսել ու պատմել»։ Ու թեև վեպում կան առանձին անձնություններ, բայց, ըստ Թումանյանի, «չափազանցություններն արված են ցավի սաստկության տակ կամ ողևորության տենդի մեջ, իսկ սխալներն առաջացել են այն հանգամանքից, որ նա իր ողբը գրել է իրական պատերազմից 13—14 տարի հետո» (VI, 279)։ Իսկ ընդհանուր առմամբ Թումանյանը բազմիցս ընդգծում է, որ Աբովյանն ամենուր «ճշմարտապատում է ու հարազատ իր ժամանակին և քաջածանոթ դեպքերին ու դեմքերին»։ Նա հիացմունքով է նշում, թե վիպասանն «ի՜նչ թարմությամբ ու ինչքան կենդանի պատմում է» անցյալ իրադարձությունների մասին (VI, 279, 283)։

Այս եղրակացությունը հանդելուց առաջ Թումանյանը պատմական աղբյուրների և աշխատությունների մի ամբողջ գրադարան է օգտագործել, որոնց պարզ թվարկումն անգամ կարող է շատ էջեր գրավել¹⁶։ XIX դարի առաջին կեսին հայոց աշխարհում կատարված մեծ դեպքերը նկարագրվում և բնութագրվում են պատմական լայն կոնտեքստի մեջ, հին և նոր ժամանակների հետ կոտորված բազմաթիվ գուգահեռներով։ Այդ նպատակով տարբեր աղբյուրներով վկայակոչվում են միջնադարյան շատ հայ պատմիչներ՝ Խորենացուց, Բյուրանցիից ու Նղիշից մինչև Զաքարիա Սարկավազ, Առաքել Դավրիժեցի և Միքայել Զամչյան։ Իսկ բուն XIX դարի դեպքերի համար օգտագործվում են առաջին հերթին ռուսերեն հրատարակված սկզբնաղբյուրները։ Դրանք Թումանյանն ուսումնասիրել է հատուկ խնամքով ու մանրամասնությամբ։

Այս շարքում առաջին հերթին պետք է հիշատակել 1820-ական թթ. ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ակտիվ մասնակիցների հիշողություններն ու վկայությունները, որոնք, սկսած անցյալ դարի վերջին քառորդից, տպագրվում էին Թիֆլիսում հրատարակվող «Կավկասկի սբորնիկի» հերթական հատորներում։ Թումանյանի համար հատկապես կարևոր սկզբընադարյան են եղել դեկաբրիստ Ե. Ե. Լաշինովի հուշերը, որոնք նա բաղմիցս օգտագործում է և՛ այս ուսումնասիրության մեջ, և՛ հիշյալ հրապարակաբանական հոդվածներում¹⁷։ Առավել հաճախ վկայակոչվող և Աբովյանի վեպի հետ համեմատության մեջ դրվող ռուսերեն հրատարակություններից են նաև Գ. Պետտոյի «Կովկասյան սյուտերազմը առանձին ակնարկներում, դովազներում, լեզենգներում և կենսագրություններում» եռահատոր աշխատությունը (ՍՊԲ, 1885—1886), Պ. Գ. Բուտկովի «Նյութեր Կովկասի նոր պատմության համար» (ՍՊԲ, 1869), «Մարդկության պատմություն» բազմահատորակիր, պատմագիտական, հուշագրական և արխիվային շատ ուրիշ գրքեր։ Զարմանալի բարեխղճությամբ և հետևողականորեն Թումանյանը հավաքել է բոլոր առկա փաստերը, համագրել Աբովյանի վեպի հետ և հանգել վերջինիս պատմական հավաստիության մտքին։ Ըստ Թումանյանի՝ այդ գործում կարևոր նըշանակություն է ունեցել և այն, որ նկարագրվող դեպքերի ժամանակ Աբովյան-

16 Թումանյանի ձեռքի տակ եղած և օգտագործած սկզբնաղբյուրները մեծ մասամբ հայտնաբերված և հիշատակված են Երկրի ժողովածուի 6-րդ հատորի ծանոթագրություններում (էջ 455—464)։ Տե՛ս նաև Է. Ն. Կարապետյան. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի պատմական ակունքները Հովհ. Թումանյանի ուսումնասիրությամբ. Երևան, 1982։

17 Դեկաբրիստ Ե. Ե. Լաշինովի «Խոստովանություն» վերնագիրը կրող գրառումների մի քանի մասեր առաջին անգամ տպագրվել են հիշյալ ժողովածուներում, որտեղից և օգտվում է Թումանյանը (տե՛ս Отрывок из «Исповеди» Лашинова.—«Кавказский сборник», т. I, Тифлис, 1876, с. 123—196, т. II, 1877, с. 75—115)։ Ե. Լաշինովի գրառումների մյուս մասերը հրապարակել է ակադ. Մ. Ներսիսյանը (տե՛ս М. Нерсисян. Из истории русско-армянских отношений, кн. I, Ереван, 1956, с. 312—396)։ Լաշինովի մասին տե՛ս նույն գրքում, էջ 179—219, ինչպես նաև Մ. Ներսիսյան. Դեկաբրիստները Հայաստանում. Երևան, 1958։

նր «գտնվում էր պատերազմի բեմի վրա, մասնակցել էր տանջվող ժողովրդի տանջանքին և ականատես բոլոր սարսափներին ու անցած դարձածին» (VI, 282)։ Այդ ամենը նկատի ունենալով, Թումանյանն իր մեծ նախորդին անվանում է ոռոս-պարսկական պատերազմի Նդիշե (VI, 328)։

Իհարկե, Թումանյանն իր ժամանակին և այն էլ միայնակ ջանքերով չէր կարող հայտնաբերել Աբովյանի վեպի բոլոր պատմական նախադեպերն ու նախատիպերը, նրանց մասին եղած սկզբնաղբյուրները։ Այդ առումով մենք այսօր, արժեքավորագրական նոր հետազոտությունների լույսի տակ, կարող ենք մի շարք լուսցումներ անել Թումանյանի մատնանշած պատմական գույանահոնների վրա¹⁸։ Դա բնական է ու հասկանալի և, իհարկե, ամենևին չի նսեմացնում Թումանյանի կատարած խոշոր աշխատանքը «Վերքի» պատմական հիմքերի հայտնաբերման ուղղությամբ, որն ինքնին լուրջ ավանդ է արժանանալիս մեջ։

Սակայն այս կապակցությամբ պետք է ղգուշացնել Աբովյանի վեպի պատմական ճշմարտացիության մասին Թումանյանի մտքերը իբրև «Վերքի» ռեալիզմի ապացույց դիտելու գալթակղությունից։ Գեղարվեստական ռեալիզմը փաստական ճշմարտացիության հետ նույնացնող այդ պարզունակ հայացքը մինչև այժմ էլ լրիվ հաղթահարված չէ, նույնիսկ գիտական շրջաններում։ Այնինչ պատմական հավաստիությունը ամենևին էլ ավտոմատիկորեն չի ապահովում ստեղծագործության ռեալիստական բնույթը, ինչպես որ ռոմանտիկական մեթոդով գրված լինելը չի բացառում պատմական դեպքերի ճշմարտապատում նկարագրության հնարավորությունը։ Վիկտոր Հյուգոյի կամ Բաթթու ռոմանտիկական վեպերն այդ բանը հաստատող շատ օրինակներ են տալիս։ Նույնն է ապացուցում նաև Աբովյանի «Վերք Հայաստանին» իր պատմական հիմքով և նախատիպերով, նույնիսկ մանրամասների մեջ լինելով միանգամայն ճշմարտապատում ստեղծագործություն, «Վերքն» իր գեղարվեստական սկզբունքներով գերադասցապես ռոմանտիկական երկ է, և այստեղ որևէ հակասություն չկա, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից։ Աբովյանի վեպի ռոմանտիզմը երևան է գալիս առավելապես հերոսների կերպավորման արվեստի, նրանց հեղինակային գաղափարների խոսափող դարձնելու, հեղինակային սուբյեկտիվ վերաբեմունքն ու անհատականը հաճախ առաջին պլան մղելու, վերջապես՝ գործող անձանց արարքների և հոգեվիճակների վիթխարի չափազանցումների մեջ։ Սակայն սրանք արդեն Աբովյանի վեպի գեղարվեստական համակարգի հետ կապված հարցեր են, որոնք չեն մտել Թումանյանի ուսումնասիրության ոլորտը, բայց և չեն հակասում «Վերքի» մեջ նրա նկատած պատմական և փաստական հավաստիությանը։

Գիտական լուրջ արժեք ունի նաև Աբովյանի վեպի համաղգային նշանակության այն մեկնաբանությունը, որ տալիս է Թումանյանը «Վերքն» անջրնջելի գույներով մարմնավորել և անմահացրել է հայ ժողովրդի պատմության մեծ և բախտորոշ իրադարձությունը՝ ոռոսական ղենքի օգնությամբ բռնակալության լծից ազատագրվելու և զարգացման նոր ուղու վրա կանգնելու պատմական պահը։ Եթե ժողովրդական դյուցազներգության ստեղծման համար պահանջվում է աշխարհի հերոսական գույավիճակ, ապա «Վերքն» էլ (որն, ինչպես հիշում ենք, Թումանյանը բնութագրում էր իբրև «ազգային դյուցազներգություն») հենց ծնվեց Հայաստանի պատմության ճակատագրական շրջադարձի, ժողովրդի ուժերի հերոսական լարման հողի վրա։ «Այդ գրքի մեջ են ամփոփված հայ ժողովրդի վերջին ժամանակների տանջանքներն ու տենչանքները, և գաղտնիքն էլ հենց սրա մեջն է, որ նա մեղանում համարվում է մի սրբազան գիրք», — գրել է Թումանյանը և մի քանի էջ հետո հատուկ նշել, որ

¹⁸ Վեպի պատմական և կենսագրական հիմքերի ու նախատիպերի մասին տե՛ս Պ. Հակոբյան. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը. 1955, էջ 160—199։ Նույնի՝ Խաչատուր Աբովյան. Կյանքը, գործը, ժամանակը (1809—1836). 1967, էջ 221—306։

դա՛ է էականը վեպի նշանակության և հմայքի մեջ. «Նրա սիրված լինելու ցաղտնիքը, ես կարծում եմ, ամենից սրա մեջն է: Իսկ այն հանգամանքը, որ շխարհաբար է գրված—դա երկրորդական բան է. նրանից առաջ շատերն են գրել աշխարհաբար և նույնիսկ ավելի լավ, քան Խաչատուր Աբովյանի լեզուն է» (VI, 256, 259):

Կարելի է շարունակել Թումանյանի աբովյանագիտական հարցադրումներին թվարկումն ու քննարկումը: Բայց ասվածն էլ բավական է եզրակացնելու համար, որ նրա առաջ քաշած դրույթներն ու փաստարկումներն իրոք լուրջ բայլ էին Աբովյանի ժողովրդական գիտական ըմբռնման և մեկնաբանությունն ստանալու և շատ կողմերով այսօր էլ կարող են ազդակներ տալ աբովյանագիտության զարգացմանը:

Մենք համոզվեցինք, թե զրական-պատմական և տեղական ինչպիսի՜ մեծ հետաքրքրություն են ներկայացնում Խ. Աբովյանի և Հովհ. Թումանյանի ստեղծագործական առնչությունները իրենց բազմազան կողմերով: Ձենելով այդ կապերը, մենք հաղորդակից ենք լինում այն վերին աստիճանի կարևոր իրողություններ, թե հայ նոր գրականության հիմնադրի սկզբնավորած գործը ինչպե՛ս ընկալվեց, շարունակվեց ու զարգացվեց մեր ազգային ամենամեծ բանաստեղծի կողմից՝ գրականության ժողովրդայնության և ռեսուրսների, հարազատ ժողովրդի փրկության և վերածնության համար նրա ծավալած վիթխարի գործունեության ընթացքում:

ТРАДИЦИИ ХАЧАТУРА АБОВЯНА И ОВАНЕС ТУМАНЯН

(К 175-летию со дня рождения Х. Абовяна)

Академик АН АрмССР Э. М. ДЖРБАШЯН

Резюме

Великий армянский национальный поэт Ованес Туманян был тесно и всесторонне связан с творческими традициями основоположника новой армянской литературы Хачатура Абовяна. Для Туманяна, поэта большого эпического и героического дыхания, важнейшее значение имело то, что главное произведение Х. Абовяна—роман «Раны Армении» представлялся ему не только «воплем патриота, преисполненным жгучей горести и боли», но и «национальной эпопеей, вселяющей силу и гордость». В творчестве Абовяна ярко и сильно отразилась русская политическая ориентация армянского народа, его вековая мечта об избавлении при помощи русского оружия от гнета азиатской деспотии. Туманян и в этом вопросе стал самым верным наследником и продолжателем традиций Абовяна.

Пропаганде идей и творчества Х. Абовяна поэт посвятил (полностью или частично) около десяти статей. Одна из них—большое историко-литературное исследование «Взятие Еревана и «Раны Армении» Х. Абовяна как исторический документ». Туманяна привлекало исключительное разнообразие художественных элементов, синтетический характер творческого метода Абовяна. Эти черты были органически присущи и творчеству самого Туманяна. Однако если в художественной системе Абовяна ведущим началом был романтизм, то в творчестве Туманяна на первый план выдвигается реалистическое видение и отражение действительности. Соответственно—Туманян утвердил в армянской литературе принцип полнокровной реалистической народности. Он довел до логического завершения общественные и художественные принципы Абовяна, о котором в одной из своих статей писал: «Он принадлежит всем и все мы—в нем».